Կ-1184-07.11.2025-ՊԱ-011

Նախագիծ
Երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
«ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգային անվտանգության մարմինների մասին» 2001 թվականի դեկտեմբերի 28-ի ՀՕ-294 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 2-րդ մասը «կառավարման» բառից հետո լրացնել «համակարգի» բառով:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածում «նորմատիվ» բառը փոխարինել «իրավական» բառով՝ համապատասխան փոփոխություն կատարելով նաև Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասում:

Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերում «քաղաքացիներն» ու «քաղաքացիները» բառերը փոխարինել համապատասխանաբար «անձինք» բառով, իսկ 6-րդ մասում «քաղաքացու» բառը՝ «անձի» բառով:

Հոդված 5. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին հոդվածով.
«**Հոդված 8.1. Լիազորված մարմնի խորհրդանիշերը**
1. Լիազորված մարմնի խորհրդանիշերն են դրոշը և զինանշանը:
2. Դրոշի և զինանշանի կանոնադրությունը, դրանց նկարագրությունը, դրոշի պահպանման և գործածման կարգը հաստատում է Լիազորված մարմնի ղեկավարը:»:

Հոդված 6. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 7. Օրենքի 10-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 8. Օրենքի 11-րդ հոդվածի՝
1) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ1» կետով.
«գ1) օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններում անվտանգության ապահովման անհրաժեշտությունը.».
2) 4-րդ մասում «մարմնի ակտերով» բառերը փոխարինել «մարմնի իրավական ակտերով» բառերով՝ համապատասխան փոփոխություններ կատարելով նաև Օրենքի ամբողջ տեքստում.
3) 7-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ մաս.
«Հետախուզական և հակահետախուզական մարմինների համագործակցության կարգը սահմանվում է վարչապետի որոշմամբ:»:

Հոդված 9. Օրենքի 12-րդ հոդվածից հանել «(ծառայությունների, բաժինների, բաժանմունքների)» և «Հայաստանի Հանրապետության ոստիկանության զորքերում,» բառերը:

Հոդված 10. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 4-րդ կետը «ներթափանցում» բառից առաջ լրացնել «իրենց իրավասության սահմաններում» բառերով.

2) 5.8-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.9-րդ կետ.

«5.9) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից անհատույց եղանակով ստանում են հասանելիություն իրենց գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվական համակարգերին և տվյալների շտեմարաններին, այդ թվում՝ առցանց ձևաչափով: Տեղեկատվական համակարգերի և տվյալների շտեմարանների ցանկը սահմանում է վարչապետը.».

3) 10-րդ կետից հանել «զննում, նրանց» բառերը.

4) 11-րդ կետից հանել «սահմանված կարգով», «այն» և «, որոնց բացահայտումը, կանխումն ու խափանումը վերապահված են լիազորված մարմնի իրավասությանը» բառերը.

5) 12-րդ կետից հանել «, օրենքով սահմանված կարգով,» բառերը.

6) 18-րդ կետը «պետական» բառից հետո լրացնել «ու տեղական ինքնակառավարման» բառերով.

7) 21-րդ կետում «նախապատրաստության» բառը փոխարինել «պատրաստության» բառով.

8) 24-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 24.1-ին կետ.

«24.1) պետական սահմանի պահպանության նպատակով իրականացնում են հետախուզական գործունեություն, որի իրականացման կարգը, ինչպես նաև հետախուզական գործունեություն իրականացնելիս գաղտնի մեթոդների և միջոցների օգտագործման կարգը սահմանվում են օպերատիվ-հետախուզական գործունեությունը կանոնակարգող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և լիազորված մարմնի իրավական ակտերով.».

9) 25-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«25) տեղեկություններ են հավաքում Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման նպատակով.».

10) 28-րդ կետում «և թմրանյութերի» բառերը փոխարինել «, թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի» բառերով, իսկ «բռնությամբ փոխելու» բառերը՝ «բռնի տապալելու» բառերով.

11) 31-րդ կետը «իրականացմանը,» բառից հետո լրացնել «օրենսդրությամբ սահմանված կարգով» բառերով, իսկ «պետական մարմիններում» բառերից հետո՝ «, այդ թվում՝ օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններում,» բառերով.

12) 32-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«32) արտաքին հակահետախուզական գործունեության շրջանակներում, վարչապետի որոշմամբ սահմանված կարգով համագործակցելով Հայաստանի Հանրապետության արտաքին հետախուզության ծառայության հետ, իրականացնում են միջոցառումներ՝ ուղղված Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և կազմակերպությունների, ինչպես նաև օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններում անվտանգության ապահովմանը.».

13) 42-րդ կետը «մարմինների կողմից» բառերից հետո լրացնել «իրենց իրավասությունների սահմաններում» բառերով.

14) 48-րդ կետը «վերաբերյալ» բառից հետո լրացնել «իրավական» բառով.

15) 49-րդ կետը «պայքարի» բառից հետո լրացնել «և գործընկեր հատուկ ծառայությունների հետ փոխգործակցության» բառերով.

16) 53-րդ կետը «ապահովում են» բառերից առաջ լրացնել «օրենսդրությամբ սահմանված կարգով» բառերով, «հատուկ քննչական ծառայության» բառերը փոխարինել «հակակոռուպցիոն կոմիտեի» բառերով, իսկ «Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների փոստատարային օպերատիվ կապը» բառերը՝ «Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինների թղթակցության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչություններին և հյուպատոսական հիմնարկներին ուղղված թղթակցության առաքումները» բառերով.

17) 54-րդ կետը «դիվանագիտական» բառից հետո լրացնել «ծառայության» բառով.

18) 56-րդ կետից «նորմատիվ» բառը հանել.

19) 59-րդ կետում «ներկայացուցչություններում» բառը փոխարինել «դիվանագիտական ծառայության մարմիններում օրենսդրությամբ սահմանված կարգով» բառերով, իսկ «միջոցառումներ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով» բառերը՝ «միջոցառումները,» բառով.

20) 62-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 62.1-ին կետ.

«62.1) կիրառում են հատուկ տեխնիկական միջոցներ՝ լիազոր մարմնի ղեկավարի կողմից սահմանված կարգով.»:

Հոդված 11. Օրենքի 17-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով.

«Հաշվեցուցակային զենքի ու հատուկ միջոցների հատկացման և հաշվառման կարգը սահմանում է լիազոր մարմնի ղեկավարը:»:

Հոդված 12. Օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին նախադասությունում «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» բառերը փոխարինել «վարչապետի որոշմամբ» բառերով:

Հոդված 13. Օրենքի 19-րդ հոդվածի՝

1) 4-րդ մասը «սպաները» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ վարչապետի որոշմամբ սահմանված կարգով պետական մարմիններ և կազմակերպություններ գործուղված սպաները)» բառերով, իսկ «(ներառյալ՝ պետական կառավարման հանրապետական և մարզային մարմինները, կազմակերպությունները գործուղված սպաները)» բառերը հանել.

2) 8-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 14. Օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասից հանել «բերման ենթարկելը,» և «անձի,» բառերը:

Հոդված 15.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի 5-րդ հոդվածով, 8-րդ հոդվածի 3-րդ կետով, 10-րդ հոդվածի 2-րդ և 20-րդ կետերով ու 11-րդ հոդվածով նախատեսված իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող 6 ամսվա ընթացքում, իսկ սույն օրենքի 12-րդ հոդվածով և 13-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված իրավական ակտը՝ մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ (Կ-1184-07.11.2025-ՊԱ-011/1) ԿԱՏԱՐՎԱԾ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
«ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգային անվտանգության մարմինների մասին» 2001 թվականի դեկտեմբերի 28-ի ՀՕ-294 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 2-րդ մասը «կառավարման» բառից հետո լրացնել «համակարգի» բառով:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածում «նորմատիվ» բառը փոխարինել «իրավական» բառով՝ համապատասխան փոփոխություն կատարելով նաև Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասում:

Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերում «քաղաքացիներն» ու «քաղաքացիները» բառերը փոխարինել համապատասխանաբար «անձինք» բառով, իսկ 6-րդ մասում «քաղաքացու» բառը՝ «անձի» բառով:

Հոդված 5. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին հոդվածով.
«Հոդված 8.1. Լիազորված մարմնի խորհրդանիշերը
1. Լիազորված մարմնի խորհրդանիշերն են դրոշը և զինանշանը:
2. Դրոշի և զինանշանի կանոնադրությունը, դրանց նկարագրությունը, դրոշի պահպանման և գործածման կարգը հաստատում է Լիազորված մարմնի ղեկավարը:»:

Հոդված ~~5~~ *6*. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված ~~6~~ *7*. Օրենքի 10-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված ~~7~~ *8*. Օրենքի 11-րդ հոդվածի՝
4) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ1» կետով.
«գ1) օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններում անվտանգության ապահովման անհրաժեշտությունը.».
5) 4-րդ մասում «մարմնի ակտերով» բառերը փոխարինել «մարմնի իրավական ակտերով» բառերով՝ համապատասխան փոփոխություններ կատարելով նաև Օրենքի ամբողջ տեքստում.
6) 7-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ մաս.
«Հետախուզական և հակահետախուզական մարմինների համագործակցության կարգը սահմանվում է վարչապետի որոշմամբ:»:

Հոդված ~~8~~ 9. Օրենքի 12-րդ հոդվածից հանել «(ծառայությունների, բաժինների, բաժանմունքների)» և «Հայաստանի Հանրապետության ոստիկանության զորքերում,» բառերը:

Հոդված ~~9~~ 10. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի՝

10) 4-րդ կետը «ներթափանցում» բառից առաջ լրացնել «իրենց իրավասության սահմաններում» բառերով.

11) ~~5.6~~ 5.8-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ ~~5.7~~ 5.9-րդ կետ.

«~~5.7~~ 5.9) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից անհատույց եղանակով ստանում են հասանելիություն իրենց գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվական համակարգերին և տվյալների շտեմարաններին, այդ թվում՝ առցանց ձևաչափով: Տեղեկատվական համակարգերի և տվյալների շտեմարանների ցանկը սահմանում է վարչապետը.».

12) 10-րդ կետից հանել «զննում, նրանց» բառերը.

13) 11-րդ կետից հանել «սահմանված կարգով», «այն» և «, որոնց բացահայտումը, կանխումն ու խափանումը վերապահված են լիազորված մարմնի իրավասությանը» բառերը.

14) 12-րդ կետից հանել «, օրենքով սահմանված կարգով,» բառերը.

15) 18-րդ կետը «պետական» բառից հետո լրացնել «ու տեղական ինքնակառավարման» բառերով.

16) 21-րդ կետում «նախապատրաստության» բառը փոխարինել «պատրաստության» բառով.

17) 24-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 24.1-ին կետ.

«24.1) պետական սահմանի պահպանության նպատակով իրականացնում են հետախուզական գործունեություն, որի իրականացման կարգը, ինչպես նաև հետախուզական գործունեություն իրականացնելիս գաղտնի մեթոդների և միջոցների օգտագործման կարգը սահմանվում են օպերատիվ-հետախուզական գործունեությունը կանոնակարգող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և լիազորված մարմնի իրավական ակտերով.».

18) 25-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«25) տեղեկություններ են հավաքում Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման նպատակով.».

10) 28-րդ կետում «և թմրանյութերի» բառերը փոխարինել «, թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի» բառերով, իսկ «բռնությամբ փոխելու» բառերը՝ «բռնի տապալելու» բառերով.

11) 31-րդ կետը «իրականացմանը,» բառից հետո լրացնել «օրենսդրությամբ սահմանված կարգով» բառերով, իսկ «պետական մարմիններում» բառերից հետո՝ «, այդ թվում՝ օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններում,» բառերով.

12) 32-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«32) արտաքին հակահետախուզական գործունեության շրջանակներում, վարչապետի որոշմամբ սահմանված կարգով համագործակցելով Հայաստանի Հանրապետության արտաքին հետախուզության ծառայության հետ, իրականացնում են միջոցառումներ՝ ուղղված Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և կազմակերպությունների, ինչպես նաև օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններում անվտանգության ապահովմանը.».

13) 42-րդ կետը «մարմինների կողմից» բառերից հետո լրացնել «իրենց իրավասությունների սահմաններում» բառերով.

14) 48-րդ կետը «վերաբերյալ» բառից հետո լրացնել «իրավական» բառով.

15) 49-րդ կետը «պայքարի» բառից հետո լրացնել «և գործընկեր հատուկ ծառայությունների հետ փոխգործակցության» բառերով.

16) 53-րդ կետը «ապահովում են» բառերից առաջ լրացնել «օրենսդրությամբ սահմանված կարգով» բառերով, «հատուկ քննչական ծառայության» բառերը փոխարինել «հակակոռուպցիոն կոմիտեի» բառերով, իսկ «Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների փոստատարային օպերատիվ կապը» բառերը՝ «Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինների թղթակցության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչություններին և հյուպատոսական հիմնարկներին ուղղված թղթակցության առաքումները» բառերով.

17) 54-րդ կետը «դիվանագիտական» բառից հետո լրացնել «ծառայության» բառով.

18) 56-րդ կետից «նորմատիվ» բառը հանել.

19) 59-րդ կետում «ներկայացուցչություններում» բառը փոխարինել «դիվանագիտական ծառայության մարմիններում օրենսդրությամբ սահմանված կարգով» բառերով, իսկ «միջոցառումներ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով» բառերը՝ «միջոցառումները,» բառով.

20) 62-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 62.1-ին կետ.

«62.1) կիրառում են հատուկ տեխնիկական միջոցներ՝ լիազոր մարմնի ղեկավարի կողմից սահմանված կարգով.»:

Հոդված ~~10~~ *11*. Օրենքի 17-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով.

«Հաշվեցուցակային զենքի ու հատուկ միջոցների հատկացման և հաշվառման կարգը սահմանում է լիազոր մարմնի ղեկավարը:»:

Հոդված ~~11~~ *12*. Օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին նախադասությունում «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» բառերը փոխարինել «վարչապետի որոշմամբ» բառերով:

Հոդված ~~12~~ *13*. Օրենքի 19-րդ հոդվածի՝

1) 4-րդ մասը «սպաները» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ վարչապետի որոշմամբ սահմանված կարգով պետական մարմիններ և կազմակերպություններ գործուղված սպաները)» բառերով, իսկ «(ներառյալ՝ պետական կառավարման հանրապետական և մարզային մարմինները, կազմակերպությունները գործուղված սպաները)» բառերը հանել.

2) 8-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված ~~13~~ *14*. Օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասից հանել «բերման ենթարկելը,» և «անձի,» բառերը:

Հոդված ~~14~~ *15*.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի *5-րդ հոդվածով,* ~~7~~ *8*-րդ հոդվածի 3-րդ կետով, ~~9~~ *10*-րդ հոդվածի 2-րդ և 20-րդ կետերով ու ~~10~~ *11*-րդ հոդվածով նախատեսված իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող 6 ամսվա ընթացքում, իսկ սույն օրենքի ~~11~~ *12*-րդ հոդվածով և ~~12~~ *13*-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված իրավական ակտը՝ մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1184-07.11.2025-ՊԱ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկու-թյունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկու-թյուններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 5-րդ հոդված 15-րդ հոդված**	Առաջին ընթերցմամբ ընդունված «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծն առաջարկվում է լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ հոդվածով. «Հոդված 5. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին հոդվածով. «Հոդված 8.1. Լիազորված մարմնի խորհրդանիշերը 1. Լիազորված մարմնի խորհրդանիշերն են դրոշը և զինանշանը: 2. Դրոշի և զինանշանի կանոնադրությունը, դրանց նկարագրությունը, դրոշի պահպանման և գործածման կարգը հաստատում է Լիազորված մարմնի ղեկավարը:»: Լրացումը նպատակ ունի «Ազգային անվտանգության մարմինների մասին»	Ընդունվել է : Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է

			օրենքով հստակ ամրագրել ՀՀ ազգային անվտանգության ծառայության խորհրդանիշերի վերաբերյալ իրավական հիմքերը: Ընդ որում, առանց համապատասխան լիազորող նորմերի ՀՀ ԱԱԾ խորհրդանիշերին՝ դրոշին և զինանշանին վերաբերող իրավակարգավորումները սահմանված են ՀՀ նախագահի 2002 թվականի դեկտեմբերի 18-ի N ՆՀ-1228-Ն հրամանագրով (*հիմնվել է դրոշը, հսատակվել կանոնադրությունն ու նկարագրությունը*), ՀՀ ԱԱԾ տնօրենի 2003 թվականի հոկտեմբերի 27-ի N 3-Ն հրամանով (դրոշի պահպանման, պահման և օգտագործման կարգը) և ՀՀ կառավարության 2003 թվականի փետրվարի 6-ի N 177-Ն որոշմամբ (*զինանշանի նկարագրությունը*): Առաջարկվող լրացմամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն կառաջանա օրենքի նախագծի **5-14-րդ հոդվածների հերթական համարակալում-ները փոխարինել համապատասխանաբար 6-15-րդ հոդվածներով**: **Միաժամանակ, օրենքի նախագծի 15-րդ հոդվածի 2-րդ մասով** սահմանված ժամկետում ընդունման ենթակա իրավական ակտերի շարքում առաջարկվում է նախատեսել նաև օրենքի նախագծի 5-րդ հոդվածով նախատեսվող իրավական ակտը *(Դրոշի և զինանշանի կանոնադրությունը, դրանց նկարագրությունը, դրոշի*		

			պահպանման և գործածման կարգը սահմանելու մասին ԱԱԾ տնօրենի հրամանը):		
2.	ՀՀ կառավարություն	**Նախագծի 10-րդ հոդված**	ՀՀ Ազգային ժողովի կողմից 04.12.2025թ. ամբողջությամբ ընդունվել է «Կիբեռանվտանգության մասին» օրենքի (**Կ-1139-20.08.2025-ՊԻ-011/2ամբ.**) և հարակից օրինագծերի փաթեթը: Փաթեթում ներառված էր նաև «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (**Կ-1139[8]-20.08.2025-ՊԻ-011/2ամբ.)** օրենքի նախագիծը, որով «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասն արդեն իսկ լրացվել է նոր 5.7-րդ և 5.8-րդ կետերով: Նշվածով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ կետում «5.6» և «5.7» թվերը փոխարինել համապատասխանաբար «5.8» և «5.9» թվերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է